

Ա.

ՊԼԱՏՈՆԻ ԳԱՂԱՓԱՐԱԿԱՆ ՊԵՏԱԹԻԻՒՆԸ

1. Պրիստոն եւ նրա ժամանակը

Աւելի սխալ բան չկայ այն լայն տարածուած հայեացքից, որպէս թէ գոյքի հաւասարութիւնը (կոմմունիզմ) հակասում է մարդու իրան գոյութեան, մարդկային բնութեան: Ընդհակառակն,—մարդկութեան որբանում գոյութիւն ունէր գոյքի հաւասարութիւնը և դեռ մինչև մեր ժամանակն էլ երկրագնդի ժողովրդները մեծամասնութեան հասարակական հիմունքն է եղել:

Գոյութեան կռուի օրէնքների հետ ամենից անհաշտ մէկը լինելով նա, ընդհակառակն, մարդկութեան ամենակարեւոր դէնքն է եղել այդ կռուի մէջ: Նախապատմական ժամանակների մերկ և անդէն մարդիկ միայն սերտ միանալով և շատ ու քիչ աչքի ընկնող խմբակցութիւններ կազմելով են կարողացել թաւանտառների սարսափելի թշնամիներից պաշտպանուել: Նախնական մարդը միմիայն իւր համայնքի մէջ և նրա հետ միասին է ապրել. նրա անձնաւորութիւնը խմբակցութեան անբաժան մասն էր կազմում: Համայնքի մէջ էին մարդիկ հայթայթում իրանց գոյութեան միջոցները. խմբովին որս էին անում, խմբովին ձկնորսութեամբ զբաղուում,—համայնքի մէջ ապրում, խմբովին պաշտպանում իրանց ընդհանուր բնակարանը,—ընդհանուր հողը:

Սակայն արդիւնաբերութեան զարգացմամբ այդ բոլորը վտխուեց: Արդիւնաբերութեան զարգացումը ընդհանուր սեպհականութեան հետ ստեղծագործել է նաև մասնաւոր սեպհականութիւն: Այս վերջինը սկզբում ընդգրկում էր լող մի քանի աննշան անձնական գործածութեան վերաբերեալ առարկաներ, որոնք դործ էին ածուում պատրաստողները ձեռքով, զարդեր, զէնքեր և այլ այնպիսի առարկաներ, որոնք այնքան, այսպէս առած, միացած էին մարդկանց հետ, որ նրանց մահից յետոյ յաճախ գերեզման էին դրուում:

Բայց մասնաւոր սեպհականութեան ծաւալն ու նշանակութիւնը աստիճանաբար մեծանում էին. նա սկսեց տարածուել նոյնպէս արդիւնաբերութեան աւելի նշանաւոր միջոցների վրայ,

և բռնեց վերջապէս արդիւնաբերութեան միջոցներնց ամենակարևորը, մեր գոյութեան հիմքը—հողը: Արսորդութիւնը և անասնապահութիւնը դեռ ևս պահանջում էին հողերի ընդհանուր տիրապետութիւն: Երկրագործութիւնը կատարելապէս տարրեր է: Մինչև ներկայ զիւղատնտեսական խոշոր արդիւնաբերութեան զարգացումը երկրագործութիւնը յաջող էր առաջ գնում առանձին ընտանիքների մասնաւոր տնտեսութեամբ, իսկ այդ մասնաւոր տնտեսութիւնը իւր զարգացման համար պահանջում էր հողի մասնաւոր սեպհականութիւն:

Արտեղ երկրագործութիւնը զարգանում է, և վերացուում են նրա տնտեսական նախնական ձևերը, այնտեղ աւելի և աւելի զարգանում է հողերի մասնաւոր սեպհականութեան պահանջը:

Ամենից առաջ քաղաքների արդիւնագործութեան և վաճառականութեան զարգացումն է արդիւնաբերութեան միջոցների և արդիւնքի մասնաւոր սեպհականութեան զազափար ստեղծում:

Բայց մասնաւոր սեպհականութեան սահմանը ոչ միայն աւելի և աւելի է ընդարձակուում, այլ և ինչքան զարգանում են մասնաւոր սեպհականութեամբ պայմանաւորուած վաճառականական յարաբերութիւնները և արդիւնաբերութեան միջոցները, այնքան նա մէկը միւսի յետևից կորցնում է այն սահմանափակումները, որոնք աւելի և աւելի անտանելի են դառնում նրա համար:

Չուտ անձնական սեպհականութիւնից, որ աիրոջ մահից յետոյ ոչնչացել է կամ անցել համայնքին, նա դառնում է ժառանգական սեպհականութիւն:

Սկզբնական հաւատարմութիւնը չբացել է մասնաւոր սեպհականութիւնը ընդհանուր ոյժ է դարձել, համայնքը բաժան—բաժան եղել սեպհականատէրերի, որոնք իշխում էին, և սեպհականութիւնից զրհուածների, որոնք կախում ունէին ուրիշներից. մասնաւոր սեպհականութիւն ձեռք բերելը դարձել է ընդհանուր անհրաժեշտութիւն: Փողի երևան գալով հայթաթելու ձգտումը դարձել է մի անյազ ծարաւ:

Փորձածական առարկաների կարիքը անընդհատ սահմանափակուում է: Քանի որ հարստութիւնը բաղկացած է միայն գործածական առարկաներից, ոչ ոք աւելին չի ցանկանում՝ քան ինչ որ պէտք է դուրեկան և հանգիստ կեանք վարելու համար: Իսկ փողը բաւական չի լինում, որովհետև դա այնպիսի ապրանք է, որով կարելի է ձեռք բերել ուրիշ ամեն տեսակ բան,—որ երբէք չի փչանում և միշտ կարող է պէտք գալ: Այնուհետև

գանձ ու կարողութիւն ժողովելը կեանքի խնդիր է դառնում այն տեսակ հարուստների ու կալուածատէրերի համար, որոնք աւելի ունին, քան կարիքն է պահանջում: Հարստութեան և աղքատութեան հակադրութիւնը այժմ կարող է շատ անչափելի դառնալ. այդպէս էլ լինում է ամեն տեղ, որտեղ դրա համար միայն անհրաժեշտ պայմաններ են երևան գալիս:

Այդ ճանապարհով փոփոխուում են մարդկանց միմիանց հետ ունեցած յարաբերութիւնները, նոցա բոլոր մտածողութիւնը, բոլոր գոյութիւնը: Անձնուիրութիւն դէպի հասարակութիւնը և ինքնազոհողութիւնը առաջ մարդու գլխաւոր բարեգործութիւններն էին: Նրանք այժմ աւելի և աւելի անյայտանում են: Ամեն մարդու աչք իւր առաջ լոյս կտայ. հասարակութիւնը բաժանուում է դասակարգերի, որոնք կատաղի կերպով իրար հետ կռիւ են մղում. դասակարգերը բաժանուում են անհասաների, որոնցից իւրաքանչիւրը ի նկատի ունի միայն իւր շահը, աշխատում է ըստ կարելոյն քիչ տալ համայնքին և շատ վերցնել նրանից: Աւելի և աւելի են թուլանում առանձին անձերին համայնքի հետ միացնող և հէնց համայնքը մի ամբողջութիւն դարձնող կապերը, նա կորչում է կամ բաժին դառնում որևէ ժողովրդի, որ իւր յետադիմութեան մէջ էլ պահպանել է գոյրի հաւասարութեան սլոխն ու քաջութիւնը:

Այդպէս է անցեալի բոլոր ցեղերի և պետութեանց պատմութիւնը:

Կարող է պատահել, որ աւելի արագ և աւելի աղքու կերպով Աթէնքում է կատարուել այդ գործողութիւնը: Պարսկական պատերազմների վախճանից մինչև Փիլիպպոս Մակէդոնացու Յունաստան նուաճելու շրջանը հաղիւ ընդգրկում է մէկ և կէս դար (479—338 մեր տարեթւից առաջ): Այդ շրջանի սկզբում մենք (չհաշուելով սարուկներին, որոնք, միևնոյն է, չէին պատկանում համայնքին) ի հարկէ, արդէն գտնում ենք դասակարգային տարբերութիւններ և դասակարգային հակադրութիւններ, այն է արտօնեալ ազնուականներ և ժողովրդի իրաւազուրկ խաւեր, հարուստներ և աղքատներ, — բայց այդ հակասութիւնները դեռ ևս այն աստիճանի չհասան, որ կարողանային ճնշել ազատ մարդկանց մէջ դէպի պետութիւնն ունեցած ընդհանուր հետաքրքրութիւնը: Այդ շրջանի վերջին եռեակում Ատտիկայում ստրուկների բազմութեան հետ միասին արդէն գոյութիւն ունէին բացառապէս հարուստներ և աղքատներ:

«Առաջուայ ժամանակներում», գոչեց այն ժամանակ ապրող Դեմոսթենէս ճարտասանը իւր դատաստանական ճառերից

մէկու՛մ: «ուրիշ տեսակ էր, քան այժմ: Այն ժամանակ ինչ որ պատկանում էր պետութեան, հարուստ էր և փայլուն, բայց քաղաքացւոց մէջ ոչ ոք արտաքին տեսքով չէր տարբերուում մի ուրիշից: Այժմ էլ ձեզանից իւրաքանչիւրը տկանատես լինելով կարող է համոզուել, որ Թեմիատոկէտի, Միլտիադէտի և հին ժամանակուայ այլ մեծ մարդկանց ընտելարանները իրանց համաքաղաքացիներէ ընտելարաններէց աւելի գեղեցիկ և փառահեղ շէն եղել երբէք: Բայց նոցա ժամանակ կանգնեցրած հասարակական շէնքերն ու յիշատակարանները այնպէս մեծապանծ և փառահեղ էին, որ յաւիտեանս անզուգական կը մնան: Խօսքս սրահներէ, (пропален), զինարանի, սիւնատրահներէ (колоннада), պիրէական նաւահանգստի շէնքերի և մեր քաղաքի այլ հասարակական հաստատութիւններէ մասին է: Իսկ այժմ կան այնպիսի պետական մարդիկ, որոնց մասնաւոր ընտելարանները իրանց փառահեղութեամբ նսեմացնում են շատ հասարակական հաստատութիւններ, և որոնք այնքան ահագին քանակութեամբ հողեր են ձեռք բերել, որ դուք բոլորդ, որ նստել էք այստեղ իբրև դատաւորներ, *) ձեր բոլոր անշարժ կայքերի տարածութեամբ չէք կարող համեմատուել նրանց հետ: Իրա համար էլ այժմ, այն բոլորը, ինչ որ այժմ պետութիւնը շինում է, այնքան աղքատիկ և չնչին է, որ ամօթ է ասելը»:

Այդ երեոյթը կարելի էր ամբողջ Յունաստանում նկատել, բայց ամենից պայծառ կերպով աչքի էր ընկնում Աթէնքում, որովհետև Աթէնքը շնորհիւ պարսկական պատերազմների՝ Յունաստանի ամենագորեղ պետութիւնը դարձաւ, և փրկեց յունական ազատութիւնը պարսկական լծից միմիայն նրա համար, որպէսզի նրանց վրայ դնէ իւր սեպհական լուծը: Եղէյեան ծովի ափերի և կղզիների (նոյնպէս և նրանից դուրս եղած մի քանի ծովափնեայ քաղաքներ և կղզիներ) դրեթէ ամբողջ ընտելութիւնը հպատակ և հարկատու էր դարձել Աթէնքին: Սարուկների աշխատանքի և ծաղկած վաճառականութեան օգուտների հետ պատերազմական աւարը և հպատակներից ժողոված հարկերը դարձան Աթէնքի ընտելութեան համար մշտական եկամուտի աղբիւրներ: և միջոց տուին հարուստներին աւելի հարստանալու, իսկ այն ազատ մարդկանց, որոնք ապրում էին պետական ռոճկով, սովորեցրին անգործութեան, պատառաքոյժ դարձրին,—

*) Աթէնքի դատարանները (դիկաստերիաներ) երդուեալների դատարաններ էին. նրանցից ամեն մէկը բաղկացած էր հինգ հարիւր երդուեալ դատաւորներից (հելլաստներից).

այդպիսով անբարոյականացրին և թուլացրին ամբողջ ընտելու-
թիւնը: Բայց նրանք միջոց դարձան միևնոյն ժամանակ առելու թիւն
առաջ բերելու դէպի Աթէնացիք ամբողջ Յունաստանի կողմից:

Վերջապէս գործը կեանքի և մահուան կռուի հոսաւ աւելի
զօրեղացող Աթէնքի և Պելոպոնէոսի անկախ իշխանութիւնների
մէջ, որոնք դեռ Աթէնքից չէին նուաճուել և դանուում էին
Սպարտայի զեկալարութեան տակ: Բայց այդ կռիւը միայն մի
կռիւ չէր՝ ուղղուած Աթէնքի գերիշխանութեան դէմ, դա
աւամիլարութեան և ազնուականութեան մէջ եղած մի կռիւ
էլ էր: Աթէնքը Յունաստանի ամենաաւմիլարական իշխանու-
թիւնն էր, Սպարտան—ամենաազնուականը: Աթէնքին ենթար-
կուող բոլոր իշխանութիւններն մէջ գլխաւորապէս զրկանքի
ենթարկուողները ազնուականներն էին. ամենից առաջ նրանց
էին կողոպտում և ոչ թէ ժողովրդին: Էէնց Աթէնքում, ինչքան
որ այդ կարելի էր, ժողովուրդը պետական ծանրութիւնները թողել
էր ազնուականների և հարուստների վրայ: Այդ պատճառով ազ-
նուական և հարուստ դասակարգերը ամենախիտ տաւելութեամբ
էին լցուած դէպի աթէնացիք. նոյն իսկ Աթէնքում ընկերավարական
երկպառակուլութիւնը, հարուստների և աղքատների միջի հակա-
դրութիւնը այն աստիճանի հասաւ, որ ազնուականներն ու
հարուստները յարաբերութիւն էին սկսել և դաւադրութիւններ
սարքում երկրի թշնամու, Սպարտայի հետ: Վերջինիս յաղթու-
թիւնը ժողովրդի անրապետութեան լուծը թօթափելու լաւագոյն
միջոցն էր համարուում նրանց համար:

Աթէնացւոց և Սպարտայի կռիւը, այսպէս կոչուած Պելո-
պոնէոսեան պատերազմը տևեց մօտ երեսուն տարի (431—404),
և վերջացաւ աթենական զօրութեան կատարելապէս ոչնչաց-
մամբ: Աթէնական իշխանութիւնը փոփոխուեց և սահմանա-
փակուեց մինչև Ատտիկայի սահմանները, և Սպարտային ենթար-
կուեցաւ: Առաջուայ աւամիլարութեան տեղը բռնեց Սպարտայի
ընաւորութիւնից զուրկ վերակացուների կառավարութիւնը:

Գա այնպիսի մի դրութիւն էր, որ առանձնապէս խորհրդա-
ծութիւն էր առաջ բերում, հարկադրում էր մտածել պետու-
թիւնների ծաղկման և անկման պատճառների մասին: Ամենալաւ
պետական կազմակերպութեան հարցը այն ժամանակ սկսեց
բոլորին հետաքրքրել:

Այդպիսի պատմական հանգամանքներում մեծացաւ Պլա-
տոնը: Նա ծնուել է Աթէնքում Պելոպոնէոսեան պատերազմի
սկսուելուց մի քանի տարի յետոյ*), և պատկանում էր հին

*) Նրա ծննդեան տարին իսկապէս անյայտ է, դա համարուում է
շուրջ 429—427 թ. Բրիտոսի ծննդից առաջ:

ազնուական սերնդին: Եւ նա երբէք չէր հրաժարուում իւր ազնուական ծագումից, այլ միշտ զգուանքով էր վերաբերուում դէպի ռամիւսութիւնը: Ապրելով անտեսական բարեբաստիկ պայմաններում՝ նա կարողացաւ ամբողջովին իւր մտաւոր ընդունակութիւնները զարգացման նուիրուել, և վաղ սկսեց զբազուել բանաստեղծութեամբ և իմաստասիրութեամբ: Սոկրատի հետ ունեցած ծանօթութիւնը — հաւանական է նրա կեանքի քսաներորդ տարին, — նրա վրայ վճռական ազդեցութիւն ունեցաւ:

Այդ ժամանակից նա ամբողջովին նուիրուեց իմաստասիրութեան, և Սոկրատի ամենազործունեայ աշակերտը դարձաւ: Բայց նա Սոկրատի գաղափարների շրջանը ընդարձակեց ինքնուրոյն զբաղմունքներով*), և իւր բարեկամի ու ուսուցչի մահից

*) Նրա վրայ աւելի ազդեցութիւն թողեցին Պիւթագորեսների ուսումը եւ մատեմատիկայի խոր ուսումնասիրութիւնը:— Ընդ նմին թոյլ ենք տալիս մեզ հետեւեալ նկատողութիւնը անելու: Պիւթագորոսին յաճախ կոչում են (ծն. 600 թ. եւ մեռել 540 Քր. առաջ) կոսմոնիստ (գոյրի հաւասարութեան գաղափարն ընդունող) եւ կոսմոնիստական գաշնակցութեան հիմնադիր: «Բարձր կարգի Պիւթագորեսները, ասում է Յելլերը, յունական իմաստասիրութեան ամենալաւ ծանօթներից մէկը:— ասքում էին, վերջին տեղեկութիւնների համաձայն, գոյրի եւ ստացուածքի կատարեալ հաւասարութեամբ եւ զրա համար ճիշտ հաստատուած օրէնքներ ունէին, որ նրանք յարգում էին իրրեւ աստուածային կարգադրութիւն այդ օրէնքներով բացի վշէ զգեստից՝ սահմանուած էր արեւնոտ զոհերից, մսեղէն կերակրից, բակլայից եւ այլ մի քանի սննդարար նիւթերից՝ ժուկալուծիւն: պիւթագորեսներին վերադրում են նոյնպէս ամուրիութեան սկզբունքը»: «Սակայն, — շարունակում է Յելլերը, — աւելի հին վկայողները գոյրի այդ հաւասարութեան մասին ոչինչ չգիտեն» — եւ նա հետեւեալ եզրակացութեան է դալիս. «Բոլորովին անտարակոյս է, որ յետագայ պատմարանների կարծիքը նոցա գոյրերի հաւասարութեան մասին առասպելական են»: (Zeller, die philosophie der griechen, 3 Aufl., Leipzig 1869, I, երես 270—279): Յամենայն դէպս պիւթագորեսների կեղծ կալուածական հաւասարութիւնը յետագայ դիւտ է, ստեղծագործած, ի հարկէ, պլատոնականի մեւով: Այ մի կերպով չի կարելի ասել, որ Պլատոնի գոյրի հաւասարութիւնը Պիւթագորոսից է փոխանցած:

Յունական կոսմոնիզմի պատմական տեսութիւններում պլատոնական կոսմոնիզմին կից տեղ է բռնում սովորաբար պիւթագորեսան կոսմոնիզմը: Բաւական էր, որ այստեղ նրանցից մէկի առասպելական լինելը ջոյց տուինք: Հմմ. այդ մասին բացի Յելլերից, R. Pöhlmann, geschichte

յետոյ դէպի եզիպտոս, Կիւրենիա, հարաւային Իտալիա և Սի-
կիլիա կատարած ճանապարհորդութիւններով:

Իւր ճանապարհորդութիւններէց Վերադառնալով՝ նա Ա-
թէնքում հասարակական ուսուցիչ դարձաւ: Բայց յետագանե-
րում նա իւր ուսուցչական գործունէութիւնն ընդհատեց երկու-
անգամ երկարատե ճանապարհորդութիւններ կատարելու Սի-
կիլիայում:

Այդ ճանապարհորդութիւններէ պատճառը շատ ընտրուիչ է
Պլատոնի ժամանակուայ քաղաքական կեանքի անկման վերաբեր-
մամբ: Պլատոնը քաղաքական առանձին սկզբունքներէ ծրագիր
է մշակել, որոնց մասին կասենք յետոյ, բայց նրա մտքովն էլ
չի անցել իւր համոզմունքներն ու հայեացքները գլուխ բերելու
համար գոնէ մի բան անել՝ միջամտելով քաղաքական կեանքին:
Բայց, սակայն, այդ չի նշանակում, որ նրա գաղափարները
պետութեան և համայնքի մասին անգործնական են և պիտի
մնան լոկ երեւակայութիւններ:

368 Թուին մեռաւ Գիոնեսիոս Աւագը, սիրակուզացի
բունահալը (ինքնահալ): Նորա որդին, Գիոնեսիոս կրտսերը մի
քանի իմաստասիրական յօդուածներ մշակեց և վերանորոգիչ
հարմարուեցաւ: Ընչպէս որ այդ, ըստ երևոյթին, իսկզբանէ
անտի դահաժառանգների համար սովորական էր: Պլատոնի
բարեկամ Գիոն և Գիոնեսիոսի աներձագը յոյս ունէին Գիոնե-
սիոսին տրամադրել յօդուած իրանց ձգտումներէ: Այդ դիտաւո-
րութեամբ էլ ճանապարհ ընկաւ Պլատոնը, որպէսզի բունաւորի
միջոցով հասնի այն բանին, ինչ որ ինքը ռամիալարական
պետութեան մէջ համարձակ կերպով գլուխ բերելու ձգտում
չի ունեցել, — իւր քաղաքական գաղափարների իրագործմանը
հասնել:

Հասկանալի է, նա ծանր հիասթափութիւն զգաց: Գիոնե-
սիոսը սիրում էր իւր արջունիքում իմաստասէրներ, գիտուններ
տեսնել, որոնք իրայլ էին տալիս նրա նիստ ու կացին, բայց նախ
չպիտի թունաւորէին նրա ուրախութիւնները — զինու, կնոջ և երգի
չնորհները: Երբ որ իմաստասէրները սկսեցին նրան ձանձրացնել,
այն ժամանակ «զահ բազմած իմաստասէրը» ուղղակի նրանց
աքտորեց՝ — իւր երկրից դուրս քշեց: Իսկ երբ որ Պլատոնը, որ այդ
փորձով արդէն խելքի էր եկել, մի քանի տարի յետոյ, երկրորդ


des antiken Kommunismus und Socialismus, München, 1893, I 53 էջ եւ
Drumann, Die Arbeiter und Kommunisten in Griechenland und Rom,
Königsberg, 1860, § 19.

անգամ ճանապարհ ընկաւ զէպի Սիրահուղայի արքունիքը, նա գրանով բռնակալի մէջ այնպիսի մի առեւտրութիւն առաջ բերեց, որ պէտք է ուրախանար, որ կարողացաւ իւր կեանքն ազատել և անփորձ կերպով տուն վերադառնալ:

Գրանով վերջացաւ մեր իմաստասէրի քաղաքական գործունէութիւնը: Իսկ նրա ուսուցչական գործունէութիւնը շարունակուեցաւ մինչև իւր կեանքի վախճանը, որ տեղի ունեցաւ նրա ծննդեան 81-րդ տարին:

(Շարունակելի):

Թարգ. Ն. Յ.



ՄԱՆ ԿԱՎ ԱՐԺԱ ԿԱՆ

ՅԱՌԱՋԱԿԻՄՈՒԹԻՒՆԸ ԵՒ ԿՐԹՈՒԹԵԱՆ ՍԱՀՄԱՆԸ

(Շարունակութիւն եւ վերջ):

Այս ընդգիծութիւնը, որ ժողովուրդը ցոյց է տալիս յառաջադիմութեանը, կարող էինք ստուգել և բացատրել յառաջադիմութեան իւրաքանչիւր արտայայտութեամբ, բայց մենք կըսահմանափակուենք բերած օրինակներով և կ'աշխատենք պատասխանել այս հարցին, որ բնականօրէն առաջ է գալիս. պէտք է հաւատանք ժողովրդի այս ընդգիծութեանը. Դուք ասում էք, կ'ասեն ինձ, որ երկաթուղիներէն զգուշ ևն մուտիկ-երկրագործները, որոնք իրենց կեանքն անց են կացնում յատակի վրայ ծխնելոյզ չունեցող խրճիթում կամ արօտի ետեւից լինելով, իրենք են կարում իրենց տրեխները ու շապիկները, որոնք բնաւ գելքը չեն կարգում, երկու շաբաթը մի անգամ են միջատներով լցուած շապիկը հանում, արևով և աքաղաղով են որոշում